ԱՆԲԱՎԱՐԱՐ ՍԻՐՏ

2 ԹԱԳ. 11:1-3

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կարեվոր աննուներ մտորելու համար.

- ***Աքիտոփել, Եղիամ, Ուրիա, Դավիթ եւ Բերսաբե է.***
- ***Wild at Heart: Discovering The Secret of a Man's Soul.***

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.

1 Եւ եղավ հետևեալ տարին, որ թագավորները պատերազմի դուրս գալու ժամանակին, Դավիթը Հովաբին և նորա հետ իր ծառաներին և բոլոր Իսրայէլին ուղարկեց, որոնք Ամմոնացիներին կոտորեցին, և Ռաբբան պաշարեցին. Բայց Դավիթը մնացել էր Երուսաղէմ: 2 Եւ մէկ օր իրիկուա դէմ Դավիթն իր անկողինից դուրս գալով պալատի տանիքի վրա ման էր գալիս, և տանիքի վրայից մէկ կին տեսավ «ra'ah,»

(Ծննդ. 3:6 - Եւ կինը տեսավ, որ ծառը լավ էր ուտելու համար, և թէ հաճելի էր աչքերին, և փափաքելի է ծառը նայելու համար, առավ նորա պտղից և կերավ, և իր հետ իր մարդին էլ տուաւ, և նա կերավ:

որ լվացվում էր, և այն կինը շատ գեղեցիկ էր տեսքով: 3 Եւ Դավիթը մարդ ուղարկեց և հարցուփորձ արավ այն կնկա համար. Եւ ասեցին. Ահա դա Բերսաբէն է Եղիամի աղջիկը՝ Քետացի Ուրիայի կինը: (Մատ. 1:6 - Դավիթ թագավորը ծնեց Սողոմոնին Ուրիայի կնոջից.)

4 Եւ Դավիթը պատգամավորներ ուղարկեց և առավ նորան, և նա եկավ նորա մօտ. Եւ Դավիթը պառկեց նորա հետ. Եւ նա նոր էր մաքրված իր անմաքրութիւնից. Եւ նա ետ դառավ իր տունը: 5 Եւ կինը հղիացավ, և մարդ ուղարկեց և իմացրեց Դավիթին ասելով. Ես հղի եմ: (երկու շաբաթ անց)

2 Թագ. 23:34 - Դավիթի 30 քաջազունները. Եղիամը հայրը Աքիտոփէլն է.

- ***Բերսաբէն եղել երկու տարեկան երբ Դավիթը թագավոր դարձավ:***
- ***Ամնոնը եւ Աբիսողոմը ծնվել են միեւնույն ժամանակ երբ Դավիթը թագավոր է օծվում Քեբրոնում:***

I. ԻՆՉ Է ՄԵՂՔԸ – ԻՆՉ Է ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԱՍՈՒՄ ՄԵՂՔԻ ՄԱՍԻՆ:

- ***Կան երեք եբրայերեն բառեր, որոնք թարգմանվում են «մեղք» Հին Կտակարանում:***

  1. ***Chattah – Մեղք / Sin (Sin has consequences)***
  2. ***Avon – Անօրինություն / Iniquity (Guilt)***

3. Pesha – Հանցանք / Transgression (Rebellious Act, Trespass)

Եզ. 34:7 - 7 Որ հազարների ողորմություն ես անում, որ անօրէնություն՝ հանցանք եւ մեղք ես ներում, բայց հանցավորին բնավ անպարտ չես թողնում.

9 Եւ ասեց. Ով Տէր, աղաչում եմ՝ եթէ քո առաջին շնորհք գտա, խնդրեմ թող իմ Տէրը մեզ հետ գնա, որովհետեւ սա մի խստապարանոց ազգ է. եւ ներիր մեր անօրէնությունը եւ մեր մեղքերը, եւ մեզ քո ժառանգությունը շինիր:

1. Ի՞նչ է մեղքը. Chattah. It means to miss the mark.

«Մեղքը միտք կամ գործողություն է, որը ետ է պահում կամ շեղում է Աստծո կամքից: Աստված կատարյալ է, և եթե մեր որևէ արարք մեզ ետ է պահում Աստծո գերազանցությունից՝ մեղք է: —***Բիլի Գրեհեմ.***

Հակ. 1:14-15 - *14 Բայց ամեն մէկը փորձվում է բուն իր **ցանկությունից** հրապուրուած եւ խաբված: 15 Եւ այնուհետեւ որ ցանկությունը հղացած է՝ ծնվում է մեղք. Եւ մեղքն էլ երբոր կատարվում է՝ մահ կ'ծնի:* ***(մեղքի վառոքը մահ է)***

Ծնն. 4:7 - *7 մեղքը դրան մօտ պառկած է. Եւ նա քեզ է փափաքում, բայց դու իշխիր նորա վրա:*

2 Թագ. 13:1 - 1 Եւ սորանից հետո եղավ որ Դավիթի որդի Աբիսողոմը մի գեղեցիկ քույր ունէր՝ անունը Թամար. Եւ Դավիթի որդի Ամնոնը սիրեց նորան:

2 Samuel 2:13 *Then David said to Nathan, "I have sinned against the Lord." I miss the mark.*

- ***1 Հով. 3:4 - 4 Ամեն ով որ մեղք է գործում, նա անօրէնություն է անում. եւ մեղքը ինքնին անօրէնություն է:*** ***(Everyone who commits sin practices lawlessness; and sin is lawlessness.)***

2. Ի՞նչ է անօրինությունը – What is Iniquity?

Եզ. 28:15 - *15 Դու կատարյալ էիր քո ճանապարհներում քո ստեղծուած օրից մինչեւ որ քեզանում անօրէնություն գտնվեց:*

Սաղ. 28:3 - *3 Մի կորցրու ինձ ամբարիշտների հետ եւ **անօրէնություն** գործողների հետ, որ իրենց ընկերների հետ խաղաղություն են խօսում, բայց նորանց **սրտերում չարություն կա**:*

Մատ. 7:22-23 - *22 Շատերը կասեն ինձ այն օրը, Տէր, Տէր, չէ՞ որ քո անունով **մարգարէացանք**, եւ քո անունով **դեւեր հանեցինք**, եւ քո անունով շատ **զօրություններ գործեցինք**: 23 Եւ ես այն ժամանակ պարզ կասեմ նորանց, թէ՝ Երբէք ձեզ չեմ ճանաչել. ինձանից դէն գնացէք, ով **անօրէնություն գործողներ**:*

- ***Ո՞րներ Դավիթի անօրինությունը***

2 Եւ մէկ օր իրիկվա դէմ Դավիթն իր անկողինից դուրս գալով պալատի տանիքի վրա ման էր գալիս, և տանիքի վրայից մէկ կին տեսավ, որ լվացվում էր, և այն կինը շատ գեղեցիկ էր տեսքով: *(Everyone who commits sin practices lawlessness, Ամեն ով որ մեղք է գործում, նա անօրէնություն է անում.)*

2 Թագ. 12:9 - *Ի՞նչու համար Տիրոջ խօսքն անարգեցիր՝ նորա աչքին այդ չարությունը անելով. Քետացի Ուրիային սրով մեռցրիր և նորա կինը քեզ համար կին առար. Բայց նորան սպանեցիր Ամմոնի որդկանց սրովը:* ***(Մատ. 1:6 -*** *Դաւիթ թագաւորը ծնեց Սողոմոնին Ուրիայի կնոջից.)*

3. Ի՞նչ է հանցանքը? ոտնձգություն անել.

1. *Ես եմ քո Տեր Աստվածը, ինձանից բացի այլ աստվածներ չպիտի լինեն քեզ համար:*
2. *Կուռքեր չպիտի կերտես:*
3. *Քո Տեր Աստծո անունը զուր տեղը չպիտի արտասանես:*
4. *Հիշիր շաբաթ օրը, որպեսզի սուրբ պահես այն:*

Տիրոջ խօսքն անարգեցիր՝

5. *Պատվիր քո հորն ու մորը:*
6. *Մի՛ սպանիր:*
7. *Մի՛ շնացիր:*
8. *Մի՛ գողացիր:*
9. *Քո հարևանի դեմ սուտ վկայություն մի՛ տուր:*
10. *Մ՛չ քո մերձավորի տան, ո՛չ նրա ագարակի վրա աչք մի՛ ունեցիր:*

Հանցանք գործեցիր

- ***Ո՞րներ Դավիթի հանցանքը:***

1. ***4 Եւ Դավիթը պատգամավորներ ուղարկեց և առավ նորան, և նա եկավ նորա մօտ. Եւ Դավիթը պառկեց նորա հետ.***
2. ***6 Եւ Դավիթը մարդ ուղարկեց Հովաբին, թէ Քետացի Ուրիային ինձ մօտ ուղարկիր: Եւ Հովաբը Ուրիային Դավիթի մօտ ուղարկեց:***
3. ***13 Եւ Դավիթն արբեցրեց նորան. Եւ նա իրիկունը դուրս եկավ որ իր անկողինում քնէ իր տիրոջ ծառաների հետ, և չիջավ իր տունը: 14 Եւ առավօտը եղավ, որ Դավիթը մի նամակ գրեց Հովաբին և ուղարկեց Ուրիայի ձեռքով: 15 Եւ նամակի մէջ գրեց ասելով. Ուրիային դրէք սաստիկ պատերազմի դիմաց, և դուք ետ քաշուեցէք նորա ետևից, որ նա զարկվի և մեռնի:***

II. ԵՎ ԱՅՍՊԵՍ, ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂԵՆՔ ԱՅՍ ՊԱԴԳԱՄԸ ԿԻՌԱՌԵԼ:

1. Ապաշխարություն – Repentance

Գործ. 2:37-39 - 37 Եւ երբոր այս լսեցին, իրանց սրտերում զղջացին. Եւ ասեցին Պետրոսին և միւս առաքեալներին, Ի՞նչ անենք, մարդիկ եղբարք: 38 Պետրոսն էլ նորանց ասեց. Ապաշխարեցէք՝ և ձեզանից ամեն մէկը թող մկրտուի Յիսուս Քրիստոսի անունովը՝ մեղքերի թողութեան համար, և Սուրբ Հոգու պարգևը կ՚ընդունիք: 39 Որովհետև ձեզ և ձեր որդկանց համար է այս խոստմունքը, և այն ամեն հեռաւորների համար, որոնց մեր Տէր Աստուածը կ՚կանչէ:

2 Կոր. 7:10 - 10 Որովհետև Աստուծո ուզած կերպով տրտմութիւնը, ապաշխարութիւն է գործում փրկութեան համար առանց զղջալու. բայց աշխարհի տրտմութիւնը մահ է գործում:

The Apostle Paul refers to this process of recognizing sin and being responsible for it as "godly sorrow."

ametamelētos, ä-me-tä-me'-lā-tos

Հռ. 11:29 - 29 Որովհետև Աստուծո շնորհքը և կոչումը զղջալ չ՚ունի:

2. Խոստովանություն – Confession

1 Հով. 1:8-10 - 8 Եթէ ասենք (self talk) թէ մեղք չ՚ունենք, մեր անձերը խաբում ենք և ճշմարտութիւն չ՚կա մեր մէջ: 9 Իսկ եթե խոստովանենք մեր մեղքերը, նա հավատարիմ է և արդար մեր մեղքերը մեզ ներելու, և սրբէ մեզ ամեն անիրավութիւնից: 10 Եթէ ասենք թէ մեղք չ՚գործեցինք, ստախօս ենք անում **ՆՐԱՆ**, և նորա խօսքը մեր մէջ չէ:

3. Ամեն օր մահանալ – dying to self daily. (Անձը ուրանալ)

1 Կոր. 15:31 - 31 Եղբայրնե՛ր, երդվում եմ այն պարծանքով, որ ունեմ ձեր հանդէպ մեր Տէր Հիսուս Քրիստոսով, որ ես մեռնում եմ ամէն օր:

> **Ղուկ. 9:23 -** 23 Եւ ամենքին ասում էր, Եթէ մէկը կամենում է իմ ետևից գալ, թող իր անձն ուրանա և ամեն օր իր խաչն առնէ և իմ ետևից գա:

ինչպես կարելի է ամեն օր մահանալ — How to die daily?

Գաղ. 5:24 - 24 Բայց նորանք որ Քրիստոսինն են, իրանց մարմինը խաչ հանեցին կիրքերով և ցանկութիւններով միասին:

Ամփոփում

Սաղ. 51:1-19 - *1 Ողորմիր ինձ, Աստուած, քո ողորմության պէս. և քո մեծ ողորմության պէս ջնջիր իմ հանցանքները: 2 Իսպառ լվա ինձ իմ անօրէնությունից, և սրբիր ինձ իմ մեղքից: 3 Որովհետև ես ճանաչում եմ իմ հանցանքները, և իմ մեղքն ամեն ժամանակ իմ առաջին է: 4 Միմիայն քեզ դէմ մեղանչեցի, և չարը քո աչքի առաջին գործեցի. որ դու արդար լինես քո խօսքերում, և մաքուր լինեսս քո դատաստանի մեջ: 5 Ահա ես անօրէնությունով եմ ծնվել, և մեղքով հղիացավ ինձ իմ մայրը: 6 Ահա դու սիրում ես ճշմարտությունը երիկամունքներում. և ծածուկ տեղը իմաստություն կսովորեցնես ինձ: 7 Սրբիր ինձ զոպայով՝ և ես մաքուր կլինեմ. լվա ինձ՝ և ձյունից սպիտակ կլինիմ: 8 Լսել տուր ինձ ցնծություն և ուրախություն. թող ցնծան այն ոսկորները որ կոտրատեցիր: 9 Երեսդ թագցրու իմ մեղքերից, և իմ բոլոր անօրէնությունները ջնջիր: 10 Սուրբ սիրտ ստեղծիր ինձանում, ով Աստուած, և ուղիղ հոգի նորոգիր իմ ներսում: 11 Դէն մի գցիր ինձ քո երեսից, և քո սուրբ հոգին մի վեր հանիր ինձանից: 12 Դարձեալ տուր ինձ քո փրկության ուրախությունը, և կամավոր հոգով հաստատիր ինձ: 13 Ապա անօրէններին կսովորեցնեմ քո ճանապարհները. և մեղաւորները ետ կդառնան քեզ մօտ: 14 Փրկիր ինձ արյունից, ով Աստուած՝ իմ փրկության Աստուած. և իմ լեզուն կփառաբանէ քո արդարությունը: 15 Տէր, բաց արա իմ շրթունքները. և իմ բերանը կպատմէ քո գովությունը: 16 Որովհետև դու պատարագ չես ուզում. եթէ ոչ՝ ես կտայի քեզ. և ողջակէզներին չես հավանում: 17 Աստուծո ընդունելի պատարագները կոտրուած հոգին է. կոտրված ու փշրված սիրտը դու չես անարգի, ով Աստուած: 18 Բարի արա Սիոնին քո քաղցրությունով. Երուսաղէմի պարիսպները շինիր: 19 Այն ժամանակ հաճոյ կլինեն քեզ արդարության պատարագները՝ ողջակէզներն ու մատաղները. այն ժամանակ արջառներ կմատուցանեն քո սեղանի վրա:*